«Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1 - 233/ 25 Ի տեխնիկական վիճակի
մասին եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն
որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն
որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13,
14 մասերով և ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր
քաղաքի Նարեկացու փողոց թիվ 3ա/1ա խանութին կից ինքնակամ կառուցված, ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման
պայմաններին համապատասխանող 18.55քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝
10.32քմ) խանութի, 2.74քմ ընդհանուր մակերեսով աստիճանահարթակի և դրանով
գրադեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով
սահմանված հողամասերի թվին չդասվող 12.99քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝
համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական
նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաք Նարեկացու փողոց թիվ 3ա/1ա խանութին կից
06-001-0262-0001 կադաստրային ծածկագրով հողամասի, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ

հողվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.001290 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատումից՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված խանութի, աստիճանահարթակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին խանութը, աստիճանահարթակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Նարեկացու փողոց թիվ 3ա/1ա խանութին կից գտնվող խանութին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 8/4 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2361

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ
6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՐՈ ՀՐԱՆՏԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարո Հրանտի Վարդումյանի 11.09.2025թ. թիվ 02/13179 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20082019-06-0027 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագիծը, հողամասի բաժանման սխեման, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 6 հասցեում գտնվող Կարո Հրանտի Վարդումյանին սեփականության իրավունքով պատկանող խանութը և հողամասը՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 6 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.


ա. 0.00902 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 68,07քմ մակերեսով շինությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 6 խանութ:

բ. 0.00098 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 6/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2362

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ԲԱՂԱՔԻ ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ
5/7 ՀԱՍՑԵՈՒՄ (ԿԱԴԱՍՏՐԱՑԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ: 06-001-0438-0106) ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Մարտունի Ստեփանյանի (ծնված՝ 07.03.1955թ.) 31.07.2025 թվականի
թիվ 02/10762 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման
քաղվածքը, 28.06.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4399
վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 763-20230628-84-7059629), 25.03.1989 թվականի
անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի
կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ
Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց թիվ 5/7 հասցեում գտնվող օրինական 180.0քմ
մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում
քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով ՀՀ
կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի
29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 31.12.1998թ.-ի թիվ 867 որոշման կարգի
3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի
24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց թիվ 5/7 հասցեում
(կադաստրային ծածկագիր: 06-001-0438-0106) գտնվող 0.018հա մակերեսով հողամասի
ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված
հատակագծով:

2. Ճանաչել Հասմիկ Մարտունի Ստեփանյանի (ծնված՝ 07.03.1955թ.) սեփականության
իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց թիվ 5/7
հասցեում (կադաստրային ծածկագիր: 06-001-0438-0106) գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի
60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, օրինական 180.0քմ մակերեսով
բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական
նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից
տրված հողամասի հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝
Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Ջորյան փողոց, 14/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2363

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՅ ՓԱԿՈՒՂԻ
ԹԻՎ 1 ՀԱՅՏԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Երվանդի Գևորգյանի 30.07.2025 թվականի թիվ 02/10715 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1178106 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28.07.2025թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025QLC78Z), «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ստեփանյան փողոց փակուղի թիվ 1 հասցեում գտնվող 0.06233հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2364

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ (ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 9
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇԽ
ՌԱՖԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշիկ Ռաֆիկի Ղազարյանի (ծնված՝ 22.09.1963թ.) 14.08.2025թ. 02/11518
դիմումը, 21.07.2025 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3769
(նոտարական ակտի կողմից: 741-20250713-84-9183954) վկայագիրը, 15.01.1988թ. տրված
անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ
մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից
տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի
նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.10.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի
վերաբերյալ թիվ ՎՆ1-246/25 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու
մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու
(նախկին Սվերդլովի) փողոց թիվ 9 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և
դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 150.0քմ և դրան կից 146.7քմ
մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում
քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը
կառուցվել է 1958թ. բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ
հողամասի մակերեսը փաստացի կազմում է 593.4քմ: 593.4քմ մակերեսով հողամասը
ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում
է Աշիկ Ռաֆիկի Ղազարյանին և Նունե Զոնի Տեր-Թադևոսյանին: Աշիկ Ռաֆիկի
Ղազարյանի բաժնեմասը կազմում է (150+146.7) 296.7քմ: 593.4քմ մակերեսով հողամասը
ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում
է Աշիկ Ռաֆիկի Ղազարյանին և Նունե Զոնի Տեր-Թադևոսյանին յուրաքանչյուրին 1/2
բաժնեմասով: Աշիկ Ռաֆիկի Ղազարյանի բաժնեմասը կազմում է (150+146.7) 296.7քմ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով,
10.06.2008թ., 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված
անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության
2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ
ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Աշիկ Ռաֆիկի Ղազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (Նախկին Սվերդլովի) փողոց թիվ 9 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ (150+146.7) 296.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 593.4քմ: 593.4քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Աշիկ Ռաֆիկի Ղազարյանին և Նարեկացու փողոց 1-ին փակուղի 3-1 հասցեի սեփականատիրոջ Նունե Զոնի Տեր-Թադևոսյանին յուրաքանչյուրին 1/2 բաժնեմասով: Աշիկ Ռաֆիկի Ղազարյանի բաժնեմասը կազմում է (150+146.7) 296.7քմ:

2. Ճանաչել Աշիկ Ռաֆիկի Ղազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (Նախկին Սվերդլովի) փողոց թիվ 9 (պայմանական) հասցեի 599.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն ներկայացված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նարեկացու (Նախկին Սվերդլովի) փողոց թիվ 9 (պայմանական) հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 1-ին նրբանցք, 3/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2365

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎԱՅԱՆ ՓՈՂՈՑ 20/1
 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
 ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՐ
 ՄԱՅԱԿԱՆ ԱԼԵՔՍԻԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1328
 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մնացական Ալեքսիի Մարությանի 08.12.2023 թվականի թիվ 02/21849 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02042025-06-0043 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 20/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 23.56քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 19.48քմ) ավտոտնակը 64210 (վաթսունչորս հազար երկու հարյուր տասը) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.56քմ մակերեսով հողամասը 247710 (երկու հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մնացական Ալեքսիի Մարությանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մնացական Ալեքսիի Մարությանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելավտոտնակի և հողամասի առավաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի ցկամությունների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 11 հունիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 20/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը, և դրանով զբաղեցված հողամասը Մնացական Ալեքսիի Մարությանին օտարելու մասին» թիվ 1328 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2366

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Ք. ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ
1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՍ ԼԻՊԱՐԻՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ԵՎ ՍԵՅՐԱՆ ԼԻՊԱՐԻՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ
ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐ
ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Լիպարիտի Գևորգյանի լիազորված անձ՝ Վահե Վլադիմիրի Բաղդամյանի և Սոս Լիպարիտի Գևորգյանի 18.06.2025թ. թիվ 02/8555 դիմումը, 10.06.2025թ. տրված թիվ 3127 (նոտարական ակտի կոդ: 741-20250617-67-9103780) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15052025-06-0093 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, 30.06.2025թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025XKEN5J) և (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025DKZNPB) տեղեկանքները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /242503/ քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Տարանջատել համայնք Վանաձոր Վանաձոր ք. Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց 1-ին փակուղի 4 հասցեում գտնվող Սոս Լիպարիտի Գևորգյանին (1/2) և Սեյրան Լիպարիտի Գևորգյանին (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի ու շինությունների բնութագրերի:

2. Համայնք Վանաձոր, Վանաձոր ք. Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց 1-ին փակուղի 4 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. Սոս Լիպարիտի Գևորգյանին պատկանող 0.044456 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 96.65քմ բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց, 1-ին փակուղի, 4 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).
0.000282 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող 2.82քմ ընդհանուր մակերեսով բաց

պատշգամբը և աստիճանահարթակը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Սոս Լիպարիտի Գևորգյանին (1/2) և Սեյրան Լիպարիտի Գևորգյանին (1/2):

բ. Սեյրան Լիպարիտի Գևորգյանին պատկանող 0.066914 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց, 1-ին փակուղի, 4/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2)։

0.000282 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող 2.82 քմ ընդհանուր մակերեսով բաց պատշգամբը և աստիճանահարթակը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Սոս Լիպարիտի Գևորգյանին (1/2) և Սեյրան Լիպարիտի Գևորգյանին (1/2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2367

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0055-0039) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՅ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹԵՐԵԶԱ ԱՎԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թերեզա Ավետյանի (ծնված՝ 14.02.1965թ.) լիազորված անձ Ծովիկ Նորիկի Հարությունյանի (ծնված՝ 01.09.1966թ.) 14.10.2025թ. թիվ 02/15347 դիմումը, 19.02.1988թ. տրված տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 26.09.2025թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6988 (նոտարական ակտի կոդ: 763-20250926-84-9430168) լրացուցիչ վկայագիրը, 29.07.2025թ. թիվ 5036 (նոտարական ակտի կոդ: 763-20250729-90-9238331) լիազորագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,10հա ներքին կից 0.01908հա մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1971-1991թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,11908հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Թերեզա Ավետյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0055-0039) գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,10հա և դրան կից 0.01908հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Թերեզա Ավետյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0055-0039) կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման

համար անհրաժեշտ 11908քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ, իսկ հողամասում առկա 335,12քմ մակերեսով ինքնակամ շինությունը թողնել ինքնակամ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատկազոտով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 3-րդ փողոց, 10 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 2368

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 36
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շոթա Մամիկոնի Ուփյանի 06.10.2025 թվականի թիվ 02/14692 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072025-06-0051 վկայականը, «ԱՐՄԵՆ ՌՈՒԴԻԿԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ **որոշում եմ**,

Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 36 սպասարկման օբյեկտ հասցեում գտնվող 0362431 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 03
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2369

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1540
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 10.07.2024 թվականի թիվ 1540 որոշումը, 30.04.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի /գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-30042025-06-0013 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 10 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 116 բ-5 և Վարդանանց փողոց թիվ 116 բ/4 հասցեներում գտնվող Զոյա Գրիգորի Լալայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը և շինությունը որպես մեկ գույքային միավոր միավորելու, հողամասերի ճշտված սահմանները հաստատելու եվ փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1540 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը


1. Որոշումը լրացնել հետևյալ 5-րդ կետով

«5. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 116 բ-5 և Վարդանանց փողոց թիվ 116 բ/4 միավորված հասցեներում գտնվող 72.89 քմ մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2370

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 46 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիք ընդունելով Արտավազդ Աթաբեկի Բաղրամյանի 14.10.2025թ. թիվ 02/15346 դիմումը անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 29092022-06-0051, թիվ 14062024-06-0074 և թիվ 08072024-06-0012 վկայականները, 10.01.2024թ. Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից տրված թիվ 40 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) (հետոյ վառելիքի լիցքավորման կայան և տեղադրված տեխնոլոգիական սարքավորումներ), 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 որական եզրակացությունը և ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթուղթը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված 54-րդ կետով և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ որոշում եմ.

1. Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 46 հասցեում գտնվող 0.744 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 որական եզրակացությանը, ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթին, և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը հասարակական հողեր:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/, ՀՀ վարչապետի 2009

թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 որական եզրակացությանը և ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթին, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ հասարակական նշանակության հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2371

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 11/3
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶԿԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԺՈՐԱ
ՂԱՐԻՔԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ժորա Ղարիքի Մարկոսյանի 25.12.2023թ. թիվ 02/23041 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09102025-06-0075 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց, 11/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 41.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 34.7քմ) ավտոտնակը 133690 (հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.2քմ մակերեսով հողամասը 504710 (հինգ հարյուր չորս հազար յոթ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել ժորա Ղարիքի Մարկոսյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ ժորա Ղարիքի Մարկոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2372

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 61Դ
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուրա Հավհաննեսի Բեժանյանի 14.10.2025 թվականի թիվ 15280 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09102025-06-0028 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 61դ հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տիգրան Մեծի պողոտա 61/7 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2373

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՔԵՂՅԱՆ ՓՈՂՈՑ 62 ԵՎ
ԱՔԵՂՅԱՆ ՓՈՂՈՑ 62-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀԱՅԿԻ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդմիլա Հայկի Մանուկյանի 03.10.2025 թվականի թիվ 02/14588 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11042013-06-0014 և 24082013-06-0003 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /264494/, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց 62 և Աբեղյան փողոց 62-1 հասցեներում գտնվող Լյուդմիլա Հայկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.04132 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 156.67 քմ ընդհանուր մակերեսով շինությունները՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11042013-06-00149 և 24082013-06-0003 վկայականների :

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Աբեղյան փողոց, 62 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2374

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23Ա
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անետա Կարապետի Հակոբյանի լիազորված անձ Արմեն Սուրենի Մարտիրոսյանի 24.09.2025 թվականի թիվ 13973 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1749548 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 22.08.2025 թվականի թիվ 3858 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ:50720250822-65-9320885), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 23ա հասցեում գտնվող արտադրամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ա. Իսահակյան փողոց, 14/3 արտադրամաս:

2. Ուժը կորցրած ճանաչել ,31 հունվարի 2025 թվականի Վանաձորի համայնքի ղեկավարի «Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 23ա հասցեում գտնվող արտադրամասին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 241 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2375

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ 2 ՇԵՆՔ, 26
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Գևորգի Գրիգորյանի 13.10.2025 թվականի թիվ 15201 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092025-06-0014 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Ներսիսյան 2 շենք, 26 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Հ. Ներսիսյան փողոց, 1-ին փակուղի, 2 շենք, 26 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2376

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ ԹԻՎ 17Ա
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Խաչիկի Հակոբյանի 25.09.2025 թվականի թիվ 14072 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1883216 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող թիվ 17ա հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Մարշալ Բաղրամյան պողոտա, 15/2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2377

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՏԻ 8-Ի ՓՈՂՈՑ ԹԻՎ 4
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍԻ ԶԱԼԻԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Պետրոսի Զալիկյանի (ծնված՝ 09.09.1967թ.) 25.08.2025 թվականի թիվ 02/12157 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 22.12.1993 թվականի սեփականության վկայագիրը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 15.10.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-245/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մարտի 8-ի փողոց թիվ 4 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 330.0քմ և նրան կից 10.5քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-1995թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 340.5քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ**:

1. Ճանաչել Հարություն Պետրոսի Զալիկյանի (ծնված՝ 09.09.1967թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մարտի 8-ի փողոց թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 330.0քմ մակերեսով հողամասին կից 10.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ:


2. Ճանաչել Հարություն Պետրոսի Զալիկյանի (ծնված՝ 09.09.1967թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մարտի 8-ի

փողոց թիվ 4 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 340.5քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մարտի 8-ի փողոց, 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2378

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ 4 ԹԱՂԱՄԱՍ 21 Ա
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Կամոյի Հովակիմյանի 22.10.2025թ. թիվ 02/15822 դիմումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ 4 թաղամաս 21 ա բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.06906 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:


2. 0.06906 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2379

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1604
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ, 19 ՀՈՒԼԻՍԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 645
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 04.02.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 302, 31.07.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1674-Ա, 11.05.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1162-Ա, 21.04.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
961, 16.10.2025 Թ. ԹԻՎ 2265 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսան Հարությունի Թերզյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 22.07.2025թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցման մասին թիվ Կ-22072025-06-0103 որոշումը, Վանաձորի համայնքի ղեկավարի 19.07.2001 թվականի թիվ 645, 09.11.2007 թվականի թիվ 1278, 05.12.2011թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 6175 վկայագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 14.05.2015թ. թիվ 588-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 37 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տան ու հողամասի նկատմամբ Սուսան Հարությունի Թերզյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1604 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշման նախաբանը «հայտարարությունները» բառից հետո լրացնել «Վանաձորի համայնքի ղեկավարի 19.07.2001 թվականի թիվ 645, 09.11.2007 թվականի թիվ 1278, 05.12.2011թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 6175 վկայագիրը,» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 04 փետրվարի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 19 հուլիսի 2001 թվականի թիվ 645, 09 նոյեմբերի 2007 թվականի թիվ 1278, 31 հուլիսի 2014 թվականի թիվ 1674-Ա և 21 մայիսի 2014 թվականի թիվ 1162-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 302, 31.07.2014 թվականի «Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2014թ. մայիսի 21-ի թիվ 1162-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1674-Ա, 21.05.2014 թվականի «Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոցի թիվ 37 հասցեի բնակելի տան կից հողամասի և շինությունների

նկատմամբ Սուսաննա Հարությունի Թերզյանի սեփականության իրավունքը ճանաչելու և քաղաքային համայնքի ղեկավարի 2007թ. նոյեմբերի 09-ի թիվ 1278 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » թիվ 1162-Ա, 21 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2024 թվականի թիվ 1604 որոշման մեջ լրացում կատարելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 04 փետրվարի 2025 թվականի թիվ 302 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 961, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թիվ 2265 որոշումները:

3. Վանաձորի քաղաքապետի 19.07.2001 թվականի թիվ 645 և 09.11.2007 թվականի թիվ 1278 որոշումների մեջ՝ «Սուսաննա» բառը փոխարինել՝ «Սուսան» բառով:

4. Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2024 թվականի թիվ 1604 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «1.Ճանաչել Սուսան Հարությունի Թերզյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 37 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 396.8քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ. բացառությամբ 1960թ. կառուցված 22.17քմ ավտոտնակի: »:

5. Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2024 թվականի թիվ 1604 որոշման հավելվածը փոխարինել՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2380

ԿԱՐԵՆ ՎԱՐՉԱՄԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Կարեն Վարչամի Նահապետյանի 06.10.2025 թվականի թիվ 02/14709 վարչական բողոքը՝ ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 29-ի «Կարեն Վարչամի Նահապետյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2191 որոշման դեմ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզային քննչական վարչության թիվ 53/310511-25 գրության համաձայն՝ Վանաձոր քաղաքի 06-001-0315-0009 և 06-001-3412-0001 կադաստրային ծածկագրերով վարչական տարածքներում հողային լիցք և հարթեցման աշխատանքներ կատարելու՝ հողը փչացնելու վերաբերյալ վարչական իրավախախտումը կատարել է Կարեն Վարչամի Նահապետյանը, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2025 թվականի սեպտեմբերի 04-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի սեպտեմբերի 15-ին իրավիճակ էն վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով Կարեն Վարչամի Նահապետյանը պատշաճ ծանուցվել (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն թիվ AL0129444930AM), և չի ներկայացել վարչական վարույթի լուծմանը:

Վերոգրյալի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 29 սեպտեմբերի 2025 թվականին ընդունվել է «Կարեն Վարչամի Նահապետյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2191 որոշումը, որի համաձայն Կարեն Վարչամի Նահապետյանն ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Կարեն Վարչամի Նահապետյանն որոշման վերաբերյալ իրազեկվել է 03.10.202 թվականին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Կարեն Վարշամի Նահապետյանի կողմից վարչական բողոք ներկայացվել է 06.10.2025 թվականին, ուստի բողոքարկման ժամկետը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

06 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 02/14709 վարչական բողոքով Կարեն Վարշամի Նահապետյանը խնդրել է նոր քննության ենթարկել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 29-ի «Կարեն Վարշամի Նահապետյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2191 որոշումը:

Կարեն Վարշամի Նահապետյանի 06 հոկտեմբերի 2025 թվականի վարչական բողոքի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

2020 թվականի հոկտեմբերի 21-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն թիվ AL0130007554AM), և ներկայացել է Կարեն Վարշամի Նահապետյանը:

Վարչական բողոքում բողոք բերող անձը վկայակոչում է հետևյալ փաստերը.

Կարեն Վարշամի Նահապետյանը հայտնել է, որ իր նկատմամբ կայացված վարչական ակտի վերաբերյալ արդեն իսկ մոտավոր 2021 թվականի ընթացքում եղել է վարչական վարույթ և վերջինս ենթարկվել է վարչական պատասխանատվության, վարչական ակտի իրեն վերաբերող արարքը նախկին վարչական ակտի հիմքն հանդիսացող արարքի շարունակությունն է: Հետագայում տեղի են ունեցել հողային լիցքի աշխատանքներ, որի հետ վերջինս կապ չունի:

Կարեն Վարշամի Նահապետյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության 2020 թվականի օգոստոսի 04-ին (իսկ հիմք՝ Վանաձոր, Միչուրինի փող. 34 տ.) Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոցի սկզբնամասում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ քարե շինություն կառուցելու համար, որը կապված չէ 2025 թվականի սեպտեմբերի 29-ի Վանաձորի համայնքի ղեկավարի կողմից կայացված «Կարեն Վարշամի Նահապետյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2191 որոշման հիմք հանդիսացող արարքի հետ:

2025 թվականի նոյեմբերի 03-ին ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից ստացված զեկուցագրի համաձայն քաղաք Վանաձոր, Տանձուտ գետի ափամերձ տարածքում հողային լիցքի աշխատանքների փաստի առթիվ հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրավաբանական բաժնին որպես իրավախախտ հանդիսացող անձ է ներկայացվել Կարեն Նահապետյանը՝ հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության թիվ N53/310511-25 գրությունը:

Ելնելով վերոգրյալից Կարեն Վարշամի Նահապետյանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու բողոքը բավարարելու հիմքեր չեն հայտնաբերվել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է

ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարեն Վարշամի Նահապետյանի 06.10.2025 թվականին ներկայացված վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2381

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ 18/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՊԱՐԻՍՊԵԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՐԳԻՍ ՎԱՆՅԱՅԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Վանյայի Փահլևանյանի 15.01.2024թ. թիվ 02/925 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092025-06-0029 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 18/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.75 ընդհանուր մակերեսով պարիսպը, 86850/ութսունվեց հազար ութ հարյուր հիսուն/ ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.031677 հա մակերեսով հողամասը 2164910 /երկու միլիոն հարյուր վաթսուներես հազար ինը հարյուր տասը/ ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սարգիս Վանյայի Փահլևանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սարգիս Վանյայի Փահլևանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հտ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 2382

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ
(ՄԱՐՔՍԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 42 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳԱՅԱՆԵ ՍՏՅՈՊԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Ստյոպայի Կարապետյանի (ծնված՝ 20.01.1964թ.) 07.10.2025 թվականի թիվ 02/14877 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 04.10.2019 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5453 վկայագիրը (նոտարական ակտի կողմ: 594-20191004-84-4217148), 19.10.1992 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 28.10.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-252/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ (Մարքսի) փողոց թիվ 42 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 236.07քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1952-1994թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 708.2քմ, որը ընդհանուր համատեղ օգտագործման տակ է Գրիգոր Լուսավորիչ (Մարքսի) փողոց թիվ 42 հասցե), Գր. Լուսավորիչի փողոց թիվ 42-ի և Մարքսի փողոց 42 հասցեներով տնատիրությունների միջև:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Գայանե Ստյոպայի Կարապետյանի (ծնված՝ 20.01.1964թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ (Մարքսի) փողոց թիվ 42 հասցեում կառուցված իրավունք հաստատող

փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 236.07քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 583.34քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

0.07082հա մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ օգտագործման տակ է Գայանե Ստյոպայի Կարապետյանի (Գրիգոր Լուսավորիչ (Մարքսի) փողոց թիվ 42 հասցե), Աննա Էդիկի Մկոյանի (Գր. Լուսավորիչի փողոց թիվ 42-1 հասցե) և Գրիգոր Ժորայի Տոնոյանի (Մարքսի փողոց 42 հասցե) միջև:

0.07082հա մակերեսով հողամասից՝ Գայանե Ստյոպայի Կարապետյանի բաժնեմասը կազմում է 0.023607հա:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 6/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 04
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 նոյեմբերի 2025 թվականի N 2383

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԻԼԻԿԻԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4
ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը քննարկեց Սուսաննա Պարույրի Հարությունյանի կողմից 06.10.2025 թվականին ներկայացված թիվ 02/14745 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրություն և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Սուսաննա Պարույրի Հարությունյանի կողմից 06.10.2025 թվականին ներկայացված թիվ 02/14745 դիմումի, ինչպես նաև Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.10.2025թ. կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Կիլիկա փողոց թիվ 4 տան բնակիչ Ռուզաննա Վարդերեսյանի (հաշվառման հասցե՝ քաղաք Վանաձոր, Կիլիկա փողոց թիվ 4 տուն) կողմից նշված հասցեում կառուցվել է մառան, որը հանդիսանում է ինքնակամ կառույց և ենթակա է քանդման:

2025 թվականի հոկտեմբերի 06-ին Վանաձորի համայնքապետարան է դիմել քաղաքացի Սուսաննա Հարությունյանն առ այն, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, իր տան պատին կից, հարևանի կողմից կառուցվել է մառան, որը խոչընդոտ է հանդիսանում իր տան առքովաճառքի գործարքի կատարմանը: Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի աշխատակիցները տեղում կատարել են նշված հասցեի այց և պարզել, որ քաղաք Վանաձոր Կիլիկա փողոց, թիվ 4 տուն հասցեում (Տաթևի 5/1 հասցեին կից) ինքնակամ կառուցվել է

մառան, որը չունի քաղաքաշինական համապատասխան փաստաթղթեր և հանդիսանում է ինքնակամ կառույց:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

2025 թվականի հոկտեմբերի 31-ին հրավիրված վարչական վարույթի լսումներին Ռուզաննա Վարդերեսյանը և Սուսաննա Հարությունյանը պատշաճ ծանուցվել (հիմք՝ փոստային առաքման ծանուցման հետադարձ կտրոն թիվ AL0130199846AM, AL0130199815AM), սակայն Ռուզաննա Վարդերեսյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Սուսաննա Հարությունյանը հայտնել է, որ պնդում է իր բողոքը՝ Վանաձոր քաղաքի Կիլիկիա փողոց թիվ 4 հասցեում սեփականատեր Ռուզնա Վարդերեսյանի կողմից ինքնակամ կառուցած մառանը քանդելու և ապամոնտաժելու վերաբերյալ, սակայն թե մառանը երբ է կառուցվել տեղյակ չէ:

2025 թվականի նոյեմբերի 04-ին ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից ստացված զեկուցագրի համաձայն Վանաձոր քաղաքի Կիլիկիա փողոց թիվ 4 հասցեին կից ինքնակամ կառուցված մառանի վերաբերյալ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի աշխատակազմը տեղեկացել է 06.10.2025 թվականի Սուսաննա Հարությունյանի թիվ 02/14745 դիմումով, (մինչ դիմումի ներկայացվելը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին տեղյակ չի եղել նշված հասցեում առկա ինքնակամ մառանի մասին):

Սուսաննա Հարությունյանի դիմումին ի պատասխան 10.10.2025 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 8511 գրությամբ ծանուցվել է ինքնակամ մառանի տնօրինող Ռուզաննա Վարդերեսյանն առ այն, որ անհրաժեշտ է 5-օրյա ժամկետում քանդել ինքնակամ կառուցված մառանը, սակայն պատասխան գրություն չի ստացվել, ինչպես նաև չի ապամոնտաժվել մառանը:

Ինքնակամ մառանի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվության համար հիմք է ընդունվել Սուսաննա Հարությունյանի կողմից ներկայացված փաստերը, ըստ որի՝ նշված մառանը գտնվում է իրեն պատկանող հողամասում՝ կառուցված բնակելի տանը կից, (նշված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հենրիկ Խորենի Վարդերեսյանին (մահացած՝ 22.05.2022թ.) ժառանգներ են հանդիսանում դուստրը՝ Ռուզաննա Հենրիկի Վարդերեսյանը և որդին՝ Ռոբերտ Հենրիկի Վարդերեսյանը, որոնք փաստացի օգտագործում են վերը նշված հասցեում գտնվող գույքը):

Հիմք ընդունելով վերոգրյալը հնարավոր չի եղել պարզել ում կողմից և երբ է կառուցվել Վանաձոր քաղաքի Կիլիկիա փողոց թիվ 4 հասցեին կից ինքնակամ կառուցված մառանը: Վերոնշյալ հասցեի սեփականատերը մահացած է և ինքնակամ կառույցը ենթակա է քանդման:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնական կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնական կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնական կառույցի օգտագործման ու ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնական կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնական կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնական կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնական կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնական կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի և իրավապահ մարմինների օժանդակությամբ քանդել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Կիլիկիա փողոց թիվ 4 հասցեին կից ինքնական կառուցված մառանը:

2. Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 նոյեմբերի 2025 թվականի N 2384

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2261 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրանտ Կարլենի Մարգարյանի դիմումը, 23/10/2025 թվականի թիվ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-23102025-06-0097 որոշումը, 16 հոկտեմբերի 2025 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 2261 որոշումը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Հ. Հակոբյան փողոց թիվ 11/1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Հրանտ Կարլենի Մարգարյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2261 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2261 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:
2. Որոշման նախաբանում «7.3քմ» բառերը փոխարինել «6.6քմ» բառերով, «319.1քմ» բառերը փոխարինել «318.4քմ» բառերով, «34.2քմ» բառերը փոխարինել «35.6քմ» բառերով:
3. Որոշման 1-ին կետում «7.3քմ» բառերը փոխարինել «6.6քմ» բառերով, «34.2 մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ օգտագործման հողամաս տնատիրության հետ» բառերը փոխարինել «35.6քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ հողամաս կից տնատիրության հետ»:
4. Որոշման 2-րդ կետում «319.1քմ» բառերը փոխարինել «318.4քմ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏՈՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հտ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2385

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԳՈՒ ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտ Սարգսի Ալեքսանյանի դիմումն իր ծնողազուրկ անչափահաս թոռան՝ Գոու Արթուր Վարդանյանի նկատմամբ հոգաբարձություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 22-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 27, կետ 2), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4, Բելառուսներ փողոցի թիվ 2 շենքի, թիվ 9 բնակարանի բնակիչ Մարգարիտ Սարգսի Ալեքսանյանին (ծնված՝ 06.09.1962թ., նույնականացման քարտ՝ 018263731, տրված՝ 07.06.2025թ., 018-ի կողմից), նշանակել իր անչափահաս թոռան՝ Գոու Արթուր Վարդանյանի (ծնված՝ 16.06.2008թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 450324, տրված՝ 09.09.2021թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) նկատմամբ հոգաբարձու մինչև 16.06.2008թ.:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2386

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1157
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 24.06.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ (Կ-24062025-06-0045) որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 20.05.2025 թվականի թիվ 1157 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 20 մայիսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 16 շենքի հարավային մասում գտնվող ինքնական կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1157 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.20.05.2025թ. Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1157 որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2387

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1035
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջուլիետա Վազգենի Անդրեասյանի 15.09.2025թվականի թիվ 02.13415 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 29 ապրիլի 2025 թվականի թիվ 1035 որոշում, 14.08.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14082025-06-0230 որոշումը, 08.09.2025 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը /ծածկագիր: 2025QAMRG5/, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱԶ-Ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 29 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. 62 բ հասցեում գտնվող, Ջուլիետա Վազգենի Անդրեասյանի սեփականության իրավունքով պատկանող վարչական շենքի գրադեցրած հողամասը նախապատվության իրավունքով օտարելու, ինքնակամ շինությունները օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը և վարչական շենքի օգտագործման նպատակը փոխելու, հողամասի ճշտված սահմանները հաստատաբերելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1035 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.29 ապրիլի 2025 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի 1035 որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2.Որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերում «0.0427 հա» բառերը փոխարինել «0.04171 հա» բառերով:

3. Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«2.Փոխել Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. 62 բ հասցեում գտնվող վարչական շենքի գրադեցրած 0.04171 հա մակերեսով հողամասից 0.04006 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի իսկ 0.00165 հա մակերեսով հողամասի գործառնական

նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի, շինության օգտագործման նպատակը վարչական շենքից՝ բնակելի տան:

4. Որոշման մեջ 3-րդ կետում «6907409 (վեց միլիոն ինը հարյուր յոթ հազար չորս հարյուր ինը)» բառերը փոխարինել «6747260 (վեց միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր վաթսուն)» բառերով

5. Զուլիետա Վազգենի Անդրեասյանին հողամասի օտարման համար սահմանված վճարի տարբերությունը՝ $160149/6907409-6747260=160149/$ (հարյուր վաթսուն հազար հարյուր քառասունինը) ՀՀ դրամ գումար վերադարձնել 220051627077000 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2388

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ
Ց-6/3Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Վազգենի Սահակյանի 23.09.2025 թվականի թիվ 13925 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1453347 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ Ց-6/3ա հասցեում գտնվող կիսակառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Մոսկովյան փողոց, 6/1 կիսակառույց:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Ա. ՓԵԼԵԾՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2389

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 8
ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ, ԷԴՈՒԱՐԴ ԼԵՎՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՅՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդուարդ Լևոնի Սարգսյանի լիազորված անձ՝ Արմինե Լևոնի Սարգսյանի 27.05.2024 թվականի թիվ 02/9368 դիմումը, 14.07.2023 թվականի թիվ 3671 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20230714-90-7107623), անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 13112023-06-0034 վկայականը, 31.12.2023 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023DBUKEC), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 21.08.2024 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-280/24 Ի եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

որոշում եմ.


1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մոսկվայի փողոց 8 հասցեում գտնվող, Էդուարդ Լևոնի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 47.491քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 44.41քմ) բնակելի նշանակության շինությունները (14.57քմ մակերեսով բնակելի տուն, 3.57քմ մակերեսով հարթակ, 15.811քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 12.73քմ) անասնաշենք, 10.2քմ ծածկարան, 3.34քմ պարիսպներ)՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Էդուարդ Լևոնի Սարգսյանի կողմից 47.491քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների օրինականացման համար սահմանված վճարը 93510

(իննսուներեք հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու
դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. նոյեմբերի 06
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2390

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1917345 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շինարարների փող. թիվ 9/2 հասցեում գտնվող Վանաձորի համայնքին սեփականության իրավունքով պատկոնող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և նոր փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 2152 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.


1. Որոշման նախաբանում «1917345 վկայականը» բառերը փոխարինել «1917345 վկայականը» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2391

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՅ
ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՅԿ ԺՈՐԱՅԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Ժորայի Ղամբարյանի (ծնված՝ 11.07.1955թ.) 02.07.2025 թվականի թիվ 02/9202 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղաքը, 29.11.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6907 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 594-20231024-84-7412713), 06.05.1988 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 23.06.2025թ. թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20257TTEVM), «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 03.07.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-168/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մխիթար Հերացու փողոց թիվ 25 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1401.0քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1988-1990թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1401.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հայկ Ժորայի Ղամբարյանի (ծնված՝ 11.07.1955թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մխիթար Հերացու փողոց թիվ 25 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված

անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1401.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Հերացու փողոց, 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2392

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1402
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Միսակի Իսրայելյանի 23/07/2025 թվականի թիվ 02/10374 դիմումը, 14/07/2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14072025-06-0194 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 17.06.2025 թվականի թիվ 1402 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 17 հունիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տերյան 19/1 հասցեում գտնվող բնակելի տան ճշտված սահմանները հաստատելու մասին» թիվ 1402 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«2.27.8 քմ մակերեսով հողամասը ընդհանուր օգտագործման ճանապարհ է Սարիբեկ Միսակի Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող Տերյան փակուղի 19/2 և Ռաֆայել Միսակի Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող Տերյան փողոց 1-ին փակուղի 19/3 տնատիրությունների միջև»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2393

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1125
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Սեդրակի Բաղրամյանի լիազորված անձ՝ Սուսաննա Լյուդվիկի Բաղրամյանի 10.10.2025 թվականի թիվ 02/15100 դիմումը, 16.07.2025 թվականի թիվ 3721 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250716-90-9194732), Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 թվականի թիվ 1125 որոշումը, 10.06.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-10062025-06-0196 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Կարինե Սեդրակի Բաղրամյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1125 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«3.271.2քմ մակերեսով հողամասից 62.52քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 3 միավոր տնատիրությունների միջև՝ Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/1 պայմանական հասցե), Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/2 պայմանական հասցե) և Մագթաղ Բաղրամյանի (Սունդուկյան փողոց 76 հասցե) միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է՝ 1/3:

48.84քմ և 159.84քմ մակերեսներով հողամասերը ընդհանուր բաժնային սեփականություն է 2 միավոր տնատիրությունների միջև՝ Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/1 պայմանական հասցե) և Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/2 պայմանական հասցե) միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է 1/2:»:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2394

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4 ԹԻՎ 37 ԵՎ
ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-4 ԹԻՎ 38 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆ ՍԵՅՐԱՆԻ
ԴԱՎԻԹԱՎՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սեյրանի Դավիթավյանի 25.09.2025 թվականի թիվ 02/14075 դիմումը,
անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /266240/, անշարժ
գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13092025-06-0005 և 12092025-
06-0066 վկայականները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱՎՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված
հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»
ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝
որոշում եմ.

1. Միավորել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թիվ 37 և Տարոն-2 ՔՇՀ
4 թիվ 38 հասցեներում գտնվող Արմեն Սեյրանի Դավիթավյանին սեփականության իրավունքով
պատկանող 0.0259 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող
շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱՎՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված
հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր
համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-2 Քոթեջային թաղամաս, 37-38 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2395

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ: 06-033-0230-0032) ԳՏՆՎՈՂ ԱԼՎԱՐԴ ԱՇՈՏԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՌԻ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Աշոտի Մատինյանի 29.08.2025թ. թիվ 02/12388 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11072024-06-0025 վկայականը, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Համապատասխանեցնել Վանաձոր համայնքի գյուղ Դարպասում (հողամասի ծածկագիր: 06-033-0230-0032) գտնվող, Ալվարդ Աշոտի Մատինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.18 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես հասարակական նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես հասարակական նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամաս:

3. Ավարդ Աշոտի Մատինյանին վճարել (2197800-93150) 2104650 (երկու միլիոն հարյուր չորս հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ 0.18 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնելուց առաջացած կադաստրային արժեքի տարբերությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2396

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1124
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Սեդրակի Բաղրամյանի լիազորված անձ՝ Սուսաննա Լյուդսիկի Բաղրամյանի 10.10.2025 թվականի թիվ 02/15101 դիմումը, 16.07.2025 թվականի թիվ 372 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250716-90-9194732), Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 թվականի թիվ 1124 որոշումը, 12.09.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-120962025-06-0190 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 76 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Կարինե Սեդրակի Բաղրամյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1124 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.


«3.222.36 քմ մակերեսով հողամասից 62.52քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 3 միավոր տնատիրությունների միջև՝ Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/1 պայմանական հասցե), Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/2 պայմանական հասցե) և Մագթաղ Բաղրամյանի (Սունդուկյան փողոց 76 հասցե) միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է 1/3:

159.84քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2 միավոր տնատիրությունների միջև՝ Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/1 պայմանական հասցե) և Կարինե Սեդրակի Բաղրամյանի (Գ. Սունդուկյան փողոց 76/2 պայմանական հասցե) միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է 1/2:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՒՄԱՆ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2397

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՅ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐԻ ՈՒԼԻՍԱՆՈՎԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերգեյ Գրիգորի Ուլիխանովի (ծնված՝ 01.11.1946թ.) լիազորված անձ՝
Վալենտինա Էդուարդի Ուլիխանովի 15.07.2025 թվականի թիվ 02/9945 դիմումը, 18.03.2025
թվականի թիվ 1739 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20250409-067-
8911172), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 28.12.1971
թվականի գույքային թերթը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 06.08.2025թ. թվականի
հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների
մուտքագրման ծածկագիր: 2025AYRC49), «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և
շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ
մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 01.09.2025 թվականին «Վանաձորի
նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ
ՎՆ 1-211/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ռաֆֆու փողոց
թիվ 5 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ
օրինական 157.5քմ և նրան կից 126.3քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված
բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով
սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,
չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական
բնակելի տունը կառուցվել է 1949-2002թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման
համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 283.8քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չափապանված
անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021
թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ
ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի
24-րդ կետով՝ **որոշում եմ.**


1. Ճանաչել Սերգեյ Գրիգորի Ուլիխանովի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք,
Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման
համար անհրաժեշտ օրինական 157.5քմ մակերեսով հողամասին կից 126.3քմ մակերեսով
հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սերգեյ Գրիգորի Ուլիխանովի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 5 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 283.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ՝ 2001 թ. մայիսի 15-ից հետո կառուցված 4.8քմ մակերեսով բնակելի տան, համաձայն՝ «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սանկտ-Պետերբուրգի փողոց, 5/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2025 թվականի N 2398

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 655 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 12-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 655 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 06
Ք. Վանաձոր



Հասցեված

Հաստատում եմ

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝

Ա. Փելեշյան

թիվ 2398 որոշում

«06» նոյեմբերի 2025թ.

Պատվիրատուն Վանաձոր համայնք								
Անվանումը 2025թ. Գնումների պլանի լրացում 34								
Ֆինանսավորման աղբյուրը Վանաձոր համայնքի 2025թ. բյուջե								
Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումը			Գնման ձևը(ընթացակարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար) դրամ
1	2			3	4	5	6	7
Բաժին -01 խումբ -1 դաս-1 Աշխատակազմի պահպանման ծախսեր								
կապի ծառայություններ/հոդված 4214/								
72411100	ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում			ՄԱ	դրամ	998000	1	998.00
կոմունալ ծառայություններ /հոդված-4213/								
50321700	դեռատիզացիա և դեզինֆեկցիա			ՄԱ	դրամ	420000	1	420.00
բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ								
45111240	Վանաձոր համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերում			ԳՀ	դրամ	4996740	1	4996,74
Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝								
Վառելիք/հոդված-4264/								
09132200	բենզին (ռեզուլյար)			ԷԱԾ	լիտր	436,1	19500	8503,95
09411710	սեղմված բնական գազ			ԷԱԾ	կգ	310	5034	1560,54
Ծառայություններ /հոդված 4231/								
79821170	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար այլ տպագրական ծառայություններ			ՄԱ	դրամ	957474	1	957,47
98391200	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ընդհանուր բնույթի այլ վարչական ծառայություններ			ՄԱ	դրամ	905510	1	905,51
79531100	Գրավոր թարգմանության ծառայություններ			ՄԱ	դրամ	950000	1	950
համակարգչային ծառայություններ /հոդված 4232/								
72261180	<E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ							
72261180	<E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ			ՄԱ	դրամ	15312000	1	15312,00

72261110	համակարգչային ծրագրերի ուղեկցում և սպասարկում	ՄԱ	դրամ	130000	1		130,0
	Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ						
72261180	Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	960000	1		960,00
50311120	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ	996000	1		996,00
	Ծառայություններ /հոդված 4233/						
79631200	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն	ՄԱ	դրամ	360000	1		360,00
	կառավարչական ծառայություններ/հոդված 4235/						
79211150	Աուդիտորական ծառայություններ	ԳՀ	դրամ	*	1		*
79211150	Աուդիտորական ծառայություններ	ԳՀ	դրամ	1788000	1		1788,00
	Ծառայություններ /հոդված 421522/						
66511120	Վանաձորի համայնքապետարանի թվով 189 աշխատակիցների առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերում	ԳՀ	դրամ	30000000	1		30000,00
	Վանաձոր համայնքի կարիքների համար շենքերի տեխնիկական վիճակի եզրակացություններ /հոդված 4239/						
71631140	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի Էդուարդ Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 19 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1		110,5

71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110,5
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 41 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110,5
Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար/հողված 4239/						
45241131	Վանաձոր համայնքի գետերի հունների մաքրման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	6917100	1	6917,10
Ծառայություն /հողված-4235/						
Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ						1232,0
50531140	Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	145000	1	145,0
50531140	Վանաձոր համայնքի Ա. Մյասնիկյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	180000	1	180,0
50531140	Վանաձոր համայնքի Ա. Շիրակացու փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	150000	1	150,0
50531140	Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	130000	1	130,0
50531140	Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	45000	1	45,0
50531140	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի (Հայքի հրապարակից մինչև Թումանյան հրապարակ) հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	264000	1	264,0
50531140	Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր ճանապարհի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	168000	1	168,0
50531140	Վանաձոր համայնքի Գ. Նարեկացու փողոց 4-3 հողամաս հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	150000	1	150,0
Մասնագիտական ծառայություններ/հողված 4241/						

73432100	Ավտոմեքենաների գնահատում		ՄԱ	դրամ	250000	1		250,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /հոդված-4252/								
72611100	Վանաձորի համայնքապետարանի 2025թ. նախօրեժեռի համառ. համակարգում		ՄԱ	դրամ	997800	1		997,8
50111180	ավտովագման ծառայություններ		ԳՀ	դրամ	560000	1		560,0
50111180	ավտովագման ծառայություններ		ԳՀ	դրամ	480000	1		480,0
Գրասենյակային ապրանքներ և նյութեր /հոդված-4261/								8484,28
30234640	Հիշողության կրիչ 1		ԷԱՃ	հատ	3500	20		70000
30192133	Սրիչ		ԷԱՃ	հատ	250	80		20000
30197220	Ամրակ1		ԷԱՃ	հատ	2,5	800		2000
30197220	Ամրակ2		ԷԱՃ	հատ	3,5	20000		70000
30192121	Գրիչ1		ԷԱՃ	հատ	600	120		72000
30192121	Գրիչ2		ԷԱՃ	հատ	90	800		72000
30192700	Գրառումների գիրք		ԷԱՃ	հատ	2500	38		95000
30192125	Մարկեր		ԷԱՃ	հատ	150	120		18000
30197622	Թուղթ 1		ԷԱՃ	կգ	800	6880		5504,000
30197233	Թղթապանակ 1		ԷԱՃ	հատ	600	180		108000
30197232	Թղթապանակ 2		ԷԱՃ	հատ	350	100		35000
30197230	Թղթապանակ 3		ԷԱՃ	հատ	130	120		15600
30197230	Թղթապանակ 4		ԷԱՃ	հատ	1500	50		75000
30197230	Թղթապանակ 5		ԷԱՃ	հատ	1000	100		100000
30192700	Թղթապանակ ռեզիստր 1		ԷԱՃ	հատ	650	180		130000
30197231	Ֆայլ 1		ԷԱՃ	հատ	1800	50		90000
35821400	ՀՀ ազգային դրոշ		ԷԱՃ	հատ	9000	70		630000
30199290	Ծրար 1		ԷԱՃ	հատ	15	8000		120000
30199290	Ծրար 2		ԷԱՃ	հատ	20	3000		60000
30199290	Ծրար 3		ԷԱՃ	հատ	40	700		28000
30199290	Ծրար 4		ԷԱՃ	հատ	15	1500		22500
30192780	Էջանիշ		ԷԱՃ	հատ	200	200		40000
30197322	Կարիչ 1		ԷԱՃ	հատ	1500	80		120000
30197322	Կարիչ 2		ԷԱՃ	հատ	1500	80		120000
30197112	Կարիչի ասեղ 1		ԷԱՃ	տուփ	120	120		14400
30197100	Կարիչի ասեղ 2		ԷԱՃ	տուփ	170	120		20400
30192130	Մատիտ		ԷԱՃ	հատ	1000	100		100000
22811150	Նոթատետր 1		ԷԱՃ	հատ	260	80		20800
22811150	Նոթատետր 2		ԷԱՃ	հատ	2500	50		125000
